ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

STATE REVENUE COMMITTEE OF THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA
CHAIRMAN

0015, ք. Երևան, Մ. Խորենացու 3,7հեռ.՝ 50 20 20, 59 46 01 3,7 M. Khorenatsi Str., 0015, Yerevan Tel.: 50 20 20, 59 46 01

№ 22502/3-3 «10» 09 2009թ.

Հայաստանի Հանրապետության վարչապետ՝
պարոն Տ.Սարգսյանին

Մեծարգո պարոն Վարչապետ

ՀՀ ԿԱ ՊԵԿ 07.09.2009թ. N 21967/3-3 գրությամբ Ձեզ տեղեկացվել է, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասի գործող խմբագրությամբ հայաստանյան աղբյուրներից ոչ ռեզիդենտ կազմակերպությունների ստացած շահաբաժինները կարող են շահութահարկով չհարկվել Հայաստանում, եթե այլ պայմանների հետ մեկտեղ ոչ ռեզիդենտի ռեզիդենտության երկրում շահաբաժինները հարկման ենթակա չեն:

Տնտեսական ճգնաժամի պայմաններում շատ երկրներում ներդրողները ազատվում են շահաբաժինների հարկումից: Արդյունքում ստացվում է, որ հայկական կազմակերպություններից ոչ ռեզիդենտների ստացված շահաբաժինների հարկումը Հայաստանում կախված է այլ երկրներում գործող օրենսդրությունից: Այս նորմը վերացնելով հնարավորություն է ստեղծվում կանխել ՀՀ պետական բյուջեի կորուստները:

ԵՎԲԱԽ-ի 09.09.2009թ. նիստում հավանության է արժանացել «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 57-դ հոդվածի 1-ին մասում փոփոխություն կատարելու նպատակահարմարության հարցը և հաշվի առնելով խնդրո առարկա հարցի հրատապությունը, խնդրում եմ ՀՀ կառավարության առաջիկա նիստի օրակարգում ընդգրկել «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Գ. Խաչատրյան

Ուղղակի հարկերի ընթացակարգերի բաժին
594646
cat7.doc

Լ. Հակոբյան

52

ՀՀ ... ՈՒԹՅԱՆ
... ԳՈՒՄ
ՄՈՒՏՔԻ ... 044-276
10-09-09

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ

«ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի սեպտեմբերի 30-ի ՀՕ-155 օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասից հանել երրորդ, չորրորդ և հինգերրորդ նախադասությունները:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը).** Նախագծի նպատակն է ՀՀ պետական բյուջեի կորուստների հնարավորության բացառումը, որը կարող է տեղի ունենալ այլ երկրների ներքին օրենսդրության փոփոխությունների հետևանքով՝ կապված այդ երկրների ռեզիդենտ կազմակերպությունների շահաբաժինների չհարկման դրույթի ներդրմամբ:

1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.** Տնտեսական ճգնաժամի պայմաններում շատ երկրներում ներդրողները ազատվում են շահաբաժինների հարկումից: «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածում նշված է, որ եթե օտարերկրյա ներդրողի ռեզիդենտության պետությունում շահաբաժինները չեն հարկվում, ապա հայկական կազմակերպությունից այդ օտարերկրյա ներդրողի ստացված շահաբաժինները Հայաստանում ևս չեն հարկվում: Արդյունքում ստացվում է, որ հայկական կազմակերպություններից ոչ ռեզիդենտների ստացված շահաբաժինների հարկումը Հայաստանում կախված է այլ երկրներում գործող օրենսդրությունից:

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.** Նախագծով առաջարկվում է հայաստանյան աղբյուրներից ոչ ռեզիդենտ կազմակերպությունների ստացած շահաբաժինները հարկել 10% դրույքաչափով՝ անկախ ոչ ռեզիդենտների ռեզիդենտության երկրներում շահաբաժինների հարկման կամ չհարկման հանգամանքից:

2. **Կարգավորման առարկան.** Նախագծի կարգավորման առարկան հայաստանյան աղբյուրներից ոչ ռեզիդենտներին վճարված շահաբաժինների շահութահարկով հարկման հետ կապված հարցերի կանոնակարգումն է:

3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը.** Նախագծի ընդունման արդյունքում հնարավորություն է ստեղծվում կանխել ՀՀ պետական բյուջեի հնարավոր կորուստները:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չկա:

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԿԱՄ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման առնչությամբ պետության եկամուտների նվազեցում կամ ծախսերի ավելացում տեղի չի ունենա: